

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17

ՄԱՅԻՍ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17

Տարեկան գինը 10 բուրձի կէս տարվանը 6 բուրձի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ.—Ներքին Տե-
ստիութիւն. Նամակ Հին-Նախիջևանից. Թա-
րոն և Երաժշտութիւն. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Կ. Պօլսի հայոց թերթերէն.—Հեռագրութիւն.
ՅԱՅԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վեհափառ Կաթողիկոսը մայիսի 14-ին
ղմբել է Կովկասեան Փոխարքայ Կոմս
Վօրոնցով-Դաշկովին մի մանրամասն հե-
ռագրով Նախիջևանի զէպեքերի մասին:
Հեռագիրը պարունակում է իր մէջ այն
հայորդագրութիւնները, որ ստացել է
Վեհափառ Կաթողիկոսը վարդապետից:

Վեհափառ Կաթողիկոսը հեռագրով ցան-
կութիւն է յայտնել, որ Թիֆլիսի մաս-
նաժողովը, որ նպատակներ է ժողովել
Բագուի աղէտի զոհերի օգտին, յատկա-
նէ նպատակ նախիջևանցիների համար:
Թիֆլիսի մասնաժողովը իր կողմից նա-
խատեսելով այդ կարիքը, յատկացրել էր
այդ նպատակի համար 6000 բուրձի և
սպասում էր Վեհափառի հաւանութեան:
Մասնաժողովը կարգադրեց գումարը փո-
խադրել Նախիջևան յաջորդի արամադրու-
թեան տակ և որոշեց, որ եթէ հարկաւոր
լինի ուղարկել տալ այլու Երևանից:

Ա. Բալանթար և Յ. Փիլաթեան մայի-
սի 15-ին ներկայացան Փոխարքայի օգնա-
կան Սուլթան-Կրիմ-Գիրէյին և զեկուցա-
նելով այն ծանր վիճակի մասին, որի մէջ
գտնվում է Նախիջևանի գաւառը, խնդ-
րեցին անյապաղ օգնութիւն փոխադրու-
ման համար: Սուլթան-
Կրիմ-Գիրէյը յայտնեց, որ ձեռք
ված միջոցներ և կանխիկ այն բոլորը, ինչ
որ հնարաւոր է: Նա հայորդեց, որ Փո-
խարքայի առաջարկութեամբ Նախիջևան
է ճանապարհով մասնակցականների պետը՝
Շէյխ-ուլ-Խալամը, ուղարկված է զօրք,
զինուորական շտաբը իր կողմից կարգա-
դրել է, որ տեղական պահակաւոր զօրքը
ուշի ուշով հետէ պարսկական սահմա-
նագծի կէտերին և չը թողնէ պարսկա-
կան քիւրդերին անցնելու սահմանը և
յարձակութիւնը գործելու: զօրքի մի մասը
ուղարկված է գիւղերը: Բացի այդ կար-
գադրված է Երևանից Նախիջևան ուղար-
կելու 4000 պուլգ այլու, որովհետև Նա-
խիջևանի շուկայում առևտուր չը կայ:

Նոյն օրը ժամի 4-ին ներկայացաւ
Սուլթան-Կրիմ-Գիրէյին Թիֆլիսի առաջ-
նոր Գարեգին եպիսկոպոս Սաթուկեան
և զեկուցեց իր ստացած կարևոր և ծանր
հայորդագրութիւնների մասին, խնդրելով
հասցնել Փոխարքայի գիտութեան:

Նոյն օրը ներկայացան Սուլթան-Կրիմ-
Գիրէյին Թիֆլիսում գտնվող Նախիջևանի
գաւառի բնակիչների կողմից երեք լիա-
զօրներ խնդրելու, որ իրանց աջակցու-
թիւն արվի վերադառնալու Նախիջևանի
գաւառը, որպէս զի կարողանան խնամք
առնել իրանց ընտանիքների մասին, հո-
գալով իրանց ապրուստը: Սուլթան-Կրիմ-
Գիրէյը խոստացաւ հեռագրել Երևանի նա-
նագապետին, որ հայրենիք վերադար-
ձողներին հովանաւորութիւն արվի:

Երէկ, մայիսի 16-ին, Թիֆլիսի քաղաք-
աւանդ Կարապետ Երաժշտային տան շինու-
թեան մէջ մի խորհրդակցութիւն քննելու
թէ ինչ միջոցներով պէտք է դիմել խաղա-
ղութիւն պահպանելու քաղաքում և ինչ
ձեռնարկել Նախիջևանի գաւառի վտանգ-
վածների վերաբերութեամբ: Թէև Թիֆ-
լիս քաղաքում հանգստութիւն է տիրում,
բայց անհանգիստ տարրեր կարող են և
այստեղ երևալ և յուզմունքներ առկա
լինել: Խորհրդակցութեան մասնակցում

էին վաճառականութեան, բանկերի, մա-
սուլի ներկայացուցիչներ և մի քանի
ճայնաւորներ: Յայտնվեցին զանազան
կարծիքներ: Ջայնաւորները որոշեցին Ե-
րեկոյեան նիստին կազմել մասնաւոր
խորհրդակցութիւն:

Եզրաձիգ, մայիսի 16-ին: Ամենայն Հայոց
Սրբազանգոյն Կաթողիկոսին:

Բագուի աղէտի զոհերին օգնող յանձ-
նաժողովը Նախիջևանի քննադատների
օգտին յատկացրեց վեց հազար բուրձի:
Երեք հազար բուրձի արդէն փոխադրված
է թովմա վարդապետի անունով:

Գարեգին եպիսկոպոս

Նախիջևան, Կարապետ վարդապետին, մա-
յիսի 16-ին երեկոյեան:

Գնացի Փոխարքայի օգնական Սուլթան-
Կրիմ-Գիրէյի մօտ: Ուղարկված է կազակ-
ների հարկուրեակ: Հեռագրված է նահան-
գապետին չորս հազար պուլգ այլու ու-
ղարկել քննադատներին համար: Միջոց-
ներ են ձեռք առնված անկարգութիւն-
նէլ առաջն առնելու համար ուրիշ տե-
ղիւրում:

Գարեգին եպիսկոպոս

Նախիջևան, 16 մայիսի առաւօտեան 10
ժամ: Անդրկովկասեան շէյխ-ուլ-Խալամին:

Նախիջևանից ստացված տեղեկութիւն-
ները աստիճանաբար են բոլորին: Խնդ-
րում եմ, ի սէր Աստուծոյ, եղբայրութեան
և մարդասիրութեան գործ դնել ազգե-
ցութեան բոլոր միջոցները դադարեցնե-
լու կորստաբեր կոտորածը և ջարդը:
Սպասում եմ հանգստացուցիչ պատաս-
խան:

Թիֆլիսի թեմակալ առաջնորդ Գարեգին
եպիսկոպոս:

Նախիջևանից ուղարկված մի հեռագրով
Կարապետ վարդապետը հայորդում է, որ
թուրքերը Երևանի վանքից, ուր վանա-
հայրն է Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեան,
յափշտակել են հրաշագործ Ամենափրկչի
մասունքը:

Նախիջևանից, մայիսի 15-ին.
Գարեգին եպիսկոպոսին

Հեռագիրը երէկ ստացայ. երէկ Փո-
խարքային հայորդեցին Հազարափրկչի
յափշտակութեան մասին. խնդրում եմ
զեկուցանե՞ք, որ Շիմադուրից քաջերի
մի խումբ ցրվեց աւարառուներին—յետ
կից սրբութիւնը՝ բերելով Եւրոպացիներ-
էին Շիմադուր. սպանված են երկու հո-
գի: Երբորդ օրն է խնդրում եմ, որ դա-
դարեցնեն քաղաքին և շրջակայ գիւղե-
րին անարգել յափշտակված գոյքերի
կրկն, բայց և այսօր, բառաւորին վաղուց
յետոյ, հանգիստ իրեղէններ են կրում
զէս ու զէն: Իսկ թուրքերը դատարկու-
ն են իրանց խանութները, որպէս զի յետոյ
յափշտակութեան յանցանքը գցեն հայերի
վրա, չը նայելով որ հայերից ոչ ոք ա-
ռանց պաշտպանի լուրս չէ գալիս, մա-
նանք բազմաթիւ: Յափշտակված է Երե-
ւանից բերված ապրանքի մեծ քանակու-
թիւն: Կրկնում, խոսքում և ուրիշ տեղե-
րում, Դաւիթբաշի կիրճում, Դարապետ-
գում հայերը վերին աստիճանի վտանգաւոր
վիճակի մէջ են: Հեռագիր ստացայ Ա-
գուլիսից, որ թուրքերը քշել տարել են
տաւարը, յարձակման առաջն առածա-
նակ տեղ է ուղարկել պրիստաւը:

Այս օրակէս յարձակվում են Կարմիր
վանքի վրա. եկած բառաւորին հրաժար-
վում է ժողովրդին քաղաքից չորս վերատ
հեռու օգնութիւն հասնելուց. խնդրեցի
Փոխարքային, որքան կարելի է շուտ հե-
ծելագործ ուղարկել:

Կարապետ վարդապետ

Հին-Նախիջևանից, մայիսի 16-ին 8 ժամ

15 օրակէս առաւօտեան, Թիֆլիսի թեմակալ
առաջնորդը ստացել է հետեւեալ հեռագիրը:

«Ստացայ հեռագիրը: Երէկ կէս վաշտ
(քոտա) զինուորներ հասան Թմբուլ այն
ժամանակ, երբ հրդեհը բռնել էր ամբողջ
գիւղը: Գիւղի մեծ մասը կողոպտված է:
Քսանից աւելի սպանվածներ կան և շատ
վիրաւորվածներ:

Կէսօրից յետոյ հէնց նոր եկած շէյխ-
ուլ-Խալամի հետ միասին ճանապարհ ըն-
կայ այնտեղ. հազիւ համոզեցինք գիւղից
հեռանալու կատարելապէս պատրաստ
ամբոխին մնալ պաշտպանութեան տակ:
Կէսօրիկի մերձակայ գիւղերից հաւաք-
ված մասնակցականներից երկուսով խոստ-
ւումը առանք դադարեցնել սպանութիւն-
ներ: Ուղարկեցինք զբաւուր յորդորներ մի
քանի մերձակայ գիւղերը:

«Այսօր եկեղեցում և մզկիթում հա-
ւաքվելով և հանդիսաւոր թափօրներ կազ-
մելով՝ յոյս ունենք հանգստացնել ամբո-
խը: Այստեղ թողնելով երկու ազգեցիկ
հոգևորականներ, մենք ինքներս շտապե-
ցինք ճանապարհ ընկնել գաւառը հանգըս-
տացնելու համար, բայց յորդորները կազ-
դեն կատարած և անպատիժ կողոպտելու
հնարաւորութիւն ունեցող ամբոխին միայն
այն ժամանակ, երբ նա կը տեսնէ բա-
ւարար քանակութեամբ սուլիներ. փոխ-
նահանգապետը խոստացել է հասցնել հա-
րիւրակ կազակներ ամսի քսան և երեքին:
Այնքան հոգաւորից ճանապարհ ընկած բը-
ժիշկները չեն կարողանում այստեղ գալ:
Հազիւ անցկացրինք շէյխ-ուլ-Խալամին:
Բանից դուրս է գալիս, որ Հազարափրկչի
տարել են, կողոպտելով եկեղեցին և յետ
խլելով ուրիշ մասունքներ: Երեկոյեան
ստացանք հայորդագրութիւն, որ յարձա-
կում է գործվել Գիւղիստի վրա. յար-
ձակում է եղել Փռնակայ գիւղի վրա:
Ամենից առաջ անհրաժեշտ է զինաւոր-
ված ոյժ:

Կարապետ վարդապետ

Ստացանք հետեւեալ հեռագիրները մեր թղ-
թակիցներից:

Նախիջևան, 15 մայիսի 8 ժամ 59 րոպէ.
«Քաղաքում մասնակցականները կողոպ-
տեցին ու թալանեցին հայերի խանութ-
ները և շրջակայ գիւղերը: Թուրքերի
խլած սուրը մասունքներն այժմ յետ են
խլված: Սպանված, այրված և վիրաւոր-
ված են բազմաթիւ տղամարդիկ, կանայք
և երեխաներ: Դրութիւնը վարձուրելի է»:

Բաղալեան

Երևան, 16 մայիսի, ժամը 8 և 2 րոպէին

«Նախիջևանի և շրջակայ գիւղերի հա-
յերին հասած սարսափներն ու թշուա-
ռութիւնները նկարագրել անկարելի է:
Թեմական առաջնորդից և ուրիշ անձե-
րից ստացված հեռագիրներին համաձայն
քաղաքում սպանված և վիրաւորված
հայերի թիւը 100-ից աւելի է: Վեց հո-
գի այրված են: Գիւղերում տեղի են ու-
նեցնել սպանութիւններ, կողոպուտ, հըր-
դեհածութիւններ: Մի քանի գիւղերից
անասունները քշել տարել են: Գիւղացի-
ները մասամբ ամեն ինչ թողնելով, հա-
ւաքվում են քաղաք: Կարիքը ծայրայեղ
է: Անհրաժեշտ է շուտափոյթ և լայն
նիւթական օգնութիւն»:

Մուսեղեան

Նախիջևան, 16 մայիսի, 8 ժ. 45 ր. առ.

«Հինգերորդ օրն է թուրքերն անխնայ
կոտորում են հայերին, կողոպտելով
ստացվածքները, այրելով թալանված խա-
նութները և քաղաքի բնակարանները:
Անագին քանակութեամբ զոհեր կան,
մի քանի տանեակ վիրաւորներ:

Սպանվածների մի մասին հէնց իրանք
են թաղում տեղիւնտեղը:

Ժամանեցին 450 հետակիներ, որոնք
ոյժ չունեն կոտորածը դադարեցնելու:

Շատ եկեղեցիներ գիւղերում կողոպտ-
ված են, սրբութիւնները պղծված:

Ամեն տեղ հրդեհը շարունակվում է:

Ողջ մնացածները տեղափոխվում են
քաղաք:

Շիմադուր գիւղում սաստիկ աղբա-
տութիւն է տիրում: Սարսափը ընդհա-
նուր է:

Սով է սպառնում: Անհրաժեշտ է ար-
տակարգ օգնութիւն»:

Միխայիլ Ասուլաճաճեան Մեխիեանց

Թիֆլիսում գտնվող Նախիջևանի գաւառի
Աստապատ գիւղի բնակիչ Սաշատուր Կերա-

կոսեան ստացել է մայիսի 16-ին հետեւեալ
հեռագիրը Նախիջևանից:

Աստապատ գիւղի անասունները քշել
տարել են: Առ այժմ ողջ են:

Նախիջևանից, Թիֆլիսի քաղաքապետին,
մայիսի 16-ին 8 ժամ 30 րոպէին:

Երբ Շէյխուլ-Խալամը եկաւ, ես և հայ
վարդապետը միասին գիւղերի շըր-
ջականները պոյոյտներ արեցինք. ազգա-
բնակիչութիւնը նշանաւոր կերպով հանգս-
տացաւ:

Քաղաքային աւագ եւան-Նախիջևանի

Նախիջևան, 15 մայիսի (պաշտօնական).

Շէյխ-ուլ-Խալամը ժամանեց ցերեկվայ
2 ժամին և չը նայելով իր յոգնածու-
թեան՝ ժամի 4-ին, Երևանի, Շարուրի և
Նախիջևանի գաղիների, Երևանի փոխա-
նորդ Կարապետ վարդապետի և Ջաֆար
Զուլի խանի հետ միասին այցեցին Դա-
րախանքեզում: Թմբուլ և Դօշադիղի գիւ-
ղերը: Դարախանքեզում հայաբնակ գիւ-
ղում ժողովված էին, շէյխ-ուլ-Խալամի
հրաւերով, հարեան Դարախան և Բուլ-
ղան գիւղերի մասնակցականները, որոնց
հետ Դարախանքեզեցիները սուր յա-
րաբերութիւններ ունեն: Յորդորների
ազգեցուցութեան տակ երեք գիւղերի ազ-
գաբնակիչութիւնը հանգստացաւ և եր-
բուց չը խախտել խաղաղութիւնը:
Թմբուլում, որի նշանաւոր մասը թալան-
ված և այրված էր, շէյխ-ուլ-Խալամը և
վարդապետը հանգստացնում էին բնա-
կիչներին: Դօշադիղա թըքաբնակ գիւղում
ազգաբնակիչութիւնը նոյնպէս երբուց չը
խախտել հանգստութիւնը: Շէյխուլ-Խալամը
ուղարկեց թըքաբնակ Նէհրամ և Շախե-
բաբադ գիւղերը թղթեր, որոնք պարու-
նակում էին իրանց մէջ առաջարկու-
թիւններ չը յարձակվելու հարեան գիւ-
ղերի վրա և նպատակու նրանց պահա-
նութեան: Նախիջևանից մեկնելուց առաջ
շէյխ-ուլ-Խալամը և վարդապետը հեռա-
գիրներով հայորդեցին իրանց ճանապար-
հորդութեան մասին գիւղերում Ջուղայի,
Օրդուբաթի և Ագուլիսի անուանի մարդ-
կանց միջոցով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ. ՆԱԽԻՋԵԱՆԻՑ

Մայիսի 11-ին

Իր ժամանակին արդէն գրված է Հին-Նա-
խիջևանի հայ-թըքական յարաբերութիւնների
և փոխադարձ յուզմունքների տիրաւոր արկածը:
Առաջին սպանութիւնը պատահում է այսպէս.
մի ինչ որ թուրք անյայտ չարագործներ
ձեռքով սպանվում է քաղաքի ծայրում, Արեա-
պատ հայաբնակ գիւղի ճանապարհի վրա:
Թուրքերը սպանութիւնը անայայտն հայերին
վերագրելով, առանց օրինական ճանապարհ-
ների, առանց դատաստանի դիմելու սաստիկ
զրգովում են հայերի դէմ: Դէպքը տեղի է ու-
նենում երեկոյեան ժամի 9-ին. իսկ առաւօ-
տեան թուրքերը օր ցերեկով սպանում են մի

ընտրովին անմիջ հայր: Եւ ցաւալին այն է, որ սպանում են նրան ոչ իբրեւ մեղսակից թուրքի սպանման, այլ որովհետեւ ասում են, որ թուրքին սպանող հայերը նրանց գիւղն են փախել: Նոյն օրը ճաշին վերաւորվում է մի ուրիշ հայ. յետոյ մի ուրիշ: Երբորդ օրը Զահուկ գիւղի թուրքերը, Շիմաճուտ հայաբնակ գիւղից անցնելիս, իրանց տաւարները հայերի արածերի մէջ են բաց թողնում, որի ժամանակ թուրքն ու հայ կուէի բռնվելով, հայը երեւի աւելի ուժեղ լինելով, թուրքերից մէկին սպանում, իսկ միւսին վերաւորում է: Այստեղից արդէն հայ-թուրքական առանց այն էլ լարված յարաբերութիւնները հետզհետէ սուր կերպարանք են ստանում: Սպանված թուրքի համազիւղացիները, վրէժխնդրութեան ոգով լցված, մի քանի հարիւր անձով (մեծամասնութիւնը զինված) լցվում են ոստիկանատուն բողոքելու Դեռ հետեւանքին չը սպասած յետ են վերադառնում և Շիմաճուտի ամբողջ հօտը ընդունւում են: Տեղի է ունենում փոխադարձ կատաղի հրացանաձգութիւն: Մարդկային զոհեր կարծես չեն եղել: Դիշերս սպանվում է մի ուրիշ թուրք—թուրքու գիւղում: Զարագործները անյայտ են:

Երէկ երեկոյեան ահազին քանակութեամբ թուրքեր մի հայի տան վրա են գնում: Տան երեխան դուրս վազելով, իմաց է տալիս թուրքը ոստիկաններից մէկին: Ոստիկանը յիշեալ հայ տունը գնալով, գալիս իմաց է տալիս, թէ «հէջ բէր զատ հօխտի» (ոչինչ չը կար): Գուցէ ընթերցողը այս երկու անպաճոյճ բառերով մի մօտաւոր գաղափար կազմէ Նախիջևանի ոստիկանութեան վրա:

Հէջն ուր, ստոյգ տեղեկութիւններից իմացած, որ գէշերս ահազին քանակութեամբ զինված թուրքեր մօտակայ Սալիլու հայ գիւղը մտնելով՝ ամենաբարձրաստիճան կտոր կտոր են անում յայտնի հարուստ Սալաուտը Բաբասանին—իր կնոջ և մօր հետ: Մանր վերաւորված է և Սալաուտը աղիւնը. իսկ միւս փոքր երեխաները «թախտերի» տակ թաքնվելով հրաջըով ազատվում են: Կողպատված է Սալաուտը Բաբասանին ամբողջ հարաւորութիւնը:

Այս երկու օրվայ ընթացքում, (որպէս թէ վախից) թուրքերը ամբողջապէս դուրս եկան հայկերի թաղերից: Յամառ լուրեր են պտըտում, որ Պարսկաստանից ահազին քանակութեամբ զինքներ և թուրքեր են անցել Արաքսի այս ափը, մինչև անգամ հաստատում են, որ քաղաքի թուրքերը իրանց տան կտուրներին խոտեր լցնելով կտորած սկսելիս պէտք է իմաց տան Պարսկաստանի և շրջակայ թուրք գիւղերին—ի գիտութիւնս:

Ամբողջ 5 օր է, ինչ հայերի խանութները փակ են: Թուրքերի միայն մի մասն է փակ: Յուզումների ժամանակ իրանց պախարակիլի ֆանատիկոսական ագիտացիայով աչքի են ընկնում մի խումբ թուրքեր, որոնց թուռնն են գտնվում և մէկ երկու բարձրագոյն կըրթութեան հոտ տեսած դիպլոմաւոր թուրքեր—որոնք ամեն կերպ աշխատում են պղտորել ամբոյի մտքերը և վառել նրանց: Օրինակելի է Նախիջևանի յայտնի Ռահիմ և Զաֆար-Կուլի խաների, ինչպէս նաև Շեխ-Բեհրամի եռանդուն միջամտութիւնը:

Յ. Գ. Հեռագիր է ստացված, որ ազգաբնակչութեանը խաղաղացնելու համար այսօր Երեւանից Նախիջևան է դալու փոխ-նահանգապետը, Կարապետ վարդապետ և Երեւանի քաղաքապետն պ. Աղամալեան:

նում են մեր հայկական կեանքի նորագոյն հոսանքների առաջին սերունդի ներկայացուցիչները—Ստեփանոս Նազարեան, Միքայէլ Նալբանդեան, Շահադեղ և այլն իրանց նոր գաղափարներով և իրանց հակառակ բանակով: Պաշտելի անուններ, պաշտելի սկիզբ: Պատրոսեան կատարեց Ստեփանոսի դերը շատ տպաւորիչ կերպով: Արեւիկայի Միքայէլի դերը: Միքայէլի դերը այնքան կարճ և կրաւորական է դուրս բերված, որ նա շատ քիչ տեղ է բռնում պիէսայի մէջ և այն տպաւորութիւնը չէ թողնում, ինչ տպաւորութեան որ արժանի էր իրեւելիստ բանաստեղծ Նալբանդեանը: Նա պէտք է աւելի մեծ տեղ բռնէր, քան տրված է նրան պիէսայում:

Ամսիս 12-ին խաղացին Շէքսպիրի «Օթելլոն»: Որքան էլ մեր գաւառական բեմը նեղ և անշուք էր Շէքսպիրի ստեղծագործութիւնների համար, բայց և այնպէս Արեւիկայի լիովին պատկերացրեց քաջագործութիւններին, անհուն սիրոյ և մի և նոյն ժամանակ կասկածադրութեան և բուռն խանդի հերոսին—աֆրիկացու յատուկ իր արեւելցու գծերով: Մի քան որ աչքի էր ընկնում, այդ այն էր, որ Արեւիկային հաւասար կանացի ոյժ բացակայում էր Դեզդեմոնայի դերը կատարելու համար:

Արեւիկայի լաւ կատարեց «Օթելլոն»: Զաւր Եմազյի դերերին զոհ գնացած աղիւ մարը իր թափած անմեղ արիւնով բուռն զայրոյթ առաջացրեց, բայց այդ զայրոյթը նսեմացաւ այն զայրոյթի առաջ, երբ ներկայացանք միջոցին ստացվեցին հեռագրերը Նախիջևանից այնտեղի կտորածներին մասին: Օ... Եմազն կար և գործում էր, այժմ էլ կայ, գործում է: Ժողովուրդը ցրվեց ախուր տպաւորութեան տակ, առանց սպասելու կատարելութեանը:

Ա.—Դո

II

Եկատերինօդարում մայիսի 8-ին, կիրակի օրը, տեղիս հայ եկեղեցու երգեցիկ երկուսն խումբը հայ-լուսաւորչական եկեղեցու մատարագին երգելուց յետոյ՝ հայ-կաթօլիկների խնդրեցով գնաց կաթօլիկների եկեղեցին և խմբապետ պ. Ռ. Ղորղանեանի ղեկավարութեամբ դաշնամուրի ներդաշնակ նուագակցութեամբ երգեց՝ հանգուցեալ Մակար Եկմալեանի ներդաշնակած պատարագի արարողութեան հետեւալ կտորները. 1) «Մարմին Տէրունական», 2) «Փառք Բեզ, Տէր Աստուած մեր», 3) «Հայր մեր» և 4) «Միւսք, սուրբ, Տէր զօրութեան», և «Տէր, ողորմեան» ու «Քրիստոս յարեալ» անյայտ հեղինակների: Ապա տեղի ունեցաւ քառեակ, որ ջութակի վրա հիանալի նուագեց հայր Գոմիտաս վարդապետի ներդաշնակած օրհներգը:

Երգեցողութիւնն ընդհանրապէս հաճելի տպաւորութիւն թողեց ունկնդիրներին վրա: Աղօթող բազմութիւնը հոգեպէս, կարծես, վերացել էր երկինք: Անդառնալի անցաւ այն ժամանակը, երբ մեր ժողովուրդը դէմ էր նոյն իսկ քառաձայն երգեցողութեանը. այժմ սովորել է դրան:

Միխայիլական երեւոյթ է նաև տեղիս լուսաւորչական և կաթօլիկ հայ համայնքների համարակցութիւնը: Անդառնալի անցան այն ժամանակները, երբ միջնադարեան անհամբերող, նեղսիրտ և կրօնամոլ ոգին բուն էր դրել մեր մէջ և ցեցի նման անդադար կրծում էր առանց այդ էլ ջլատված, տանջված և բազմաչարչար հայ ազգի կրօնական հատուածներին սիրտը: Որքան կրօնական անմիտ վէճեր ջլատեցին և քամեցին մեր ոյժերը, խմեցին մեր արիւնը: Այժմ ժամանակ է անկեղծօրէն ձեռք պարզել միմեանց և ասել. «Ըսդ աստիճանը ի՞նչ կայ սիրուն, քան զանձկալի եղբայր անունս»:

Ս. Բաբայան

ՆԱՄԱԿ ԵՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 16-ին

Սոնարաբար խնդրում եմ մի անկէն շնորհէք «Մշակում» հետեւեալ երկառոյթս:

Շաբաթ, մայիսի 14-ին, պիտի կայանար իմ յայտարարած ներկայացումը, բայց Հին-Նախիջևանի սոսկալի սխուր դէպքերի առիթով յետաձգեցի ներկայացումը անորոշ ժամանակով, որը կը յայտարարենք իր ժամանակին: Սրանով խնդրում եմ թատերասէր հասարակութիւնից, որոնք տոմսակ են գնել, պահել տոմսակը մինչ ցնոր կարգադրութիւն, որը շուտով կը յայտարարենք:

Դերասան Մ. Աղայան

ՆԵՐՔԻՆ ԱՌԻՐԵՐ

«Մշակ» ներկայ համարի հետ առանձին կէս թերթով ուղարկվում է բաժանորդներին

Բազուի աղետի դոհերի օգտին ժողոված նուիրատուութիւնների ցուցակը:

Պարսից Շահին դիմաւորելու և Ռուսաստանում ուղեկցելու համար Պետերբուրգից ճանապարհ ընկաւ Նորին Մեծութեան սկիտայի գնեւորալ-մայօր Ա. Ն. Նիկոլայով: Պետերբուրգից նոյնպէս ճանապարհ ընկաւ պարսկական դեսպան Միրզա-Հասան-խանը Շահին դիմաւորելու համար:

Բազուից հեռագրում են «ВАЗА35»-ին մայիսի 14-ից. «Ստալինովի գործարանում ձեր բաղված յանցաւորին, որ ուսմը էր նետել Բազուի նահանգապետ իշխան Նախաշիճէի կառքի մէջ, ճանաչեց վերաւորված կառապանը: Ասում են, որ Կովկասի Փոխարքային խնդիր է տրված յանցաւորին զինուորական դատարանի ենթարկելու:

Թիֆլիսի Երեւանեան հրապարակի վրա գտնված Թամարեանի քարվաստարայի բոլոր խանութայինները յայտնել են խանութատէրերին, որ իրանք առաջիկայ ամսից սկսած 50% պակասեցնելու են իրանց վճարած քրէհները: Մի քանի տնտէսներ, որոնց թուում և ուղարկվալի անգամ իշխան Ն. Ն. Արզուման-Երկայնաբազուկը, պակասեցրել են իրանց անտոնների բնակարանների քրէհն 25%/-ը:

Կարսի շրջանի զինուորական նահանգապետը Կովկասի գլխաւոր վարչութեանը խնդիր է մատուցել Կարս քաղաքում լիակատար քաղաքային ինքնավարութիւն ներմուծելու համար:

Ներքին գործերի մինիստրը նահանգապետներին և քաղաքապետներին շրջաբերական է ուղարկել, որով նրանց թոյլ է տալիս ինքնուրոյն կերպով հաստատել զբաղական, ընդհանուր զարգացողական և սպօրադ ընկերութիւնների կանոնադրութիւնները, առանց Պետերբուրգի դիմելու և թոյլտուութիւն խնդրելու:

Մայիսի 8-ին, երեկոյեան ժամը 4-ին, ասում է «ՅԱՅ. ՕԸ» լրագիրը, Բայրամ-Ալիում տեղի ունեցաւ խոշոր ընդհարում ուսանելի և տեղաբնակ թուրք տարրի մէջ: Գործն սկսվել է մի ուսուի և մի պարսիկի մէջ կռուով և աստիճանաբար աճել հասել է ճակատամարտի, որի մէջ մասնակցում էին մինչև 200 մարդ: Գործն են զբաղած ցիցեր և նոյն իսկ սրեր: Արդիւնքն այն է, որ 2 պարսիկ հազիւ կենդանի են, իսկ շատերի արդէն կողքերն ու բերքն են կտորատված: Ինչպէս ասում են, կողովպետի են մի քանի խանութներ և կոտորատի բազմաթիւ ամանեղէններ:

Ստացանք հետեւեալ նոր գրքերը. 1) Սէյլան—«Հայթա-Ֆիրատ», Թիֆլիս, գինը 35 կ., 2) «Միքիլի Հերոս», կազմեց Ս. Գամալեան, Թիֆլիս, գինը 25 կ.:

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, ներկայումս Արեւսադրոգոյի գաւառի Մեծ-Արիւսի գիւղում բացված է ժամանակաւոր կարճատեւսական դպրոց իւզագործութիւն սովորելու համար: Արդէն սկսել են երեւալ աշակերտներ: Ծանկացողները պէտք է շտապեն ուղևորվել յիշած գիւղը (Ալեքսանդրօպօլից 20—25 վերստ է), որովհետեւ դասընթացը պէտք է շարունակվի միայն 4—6 շաբաթ: Գիւղում պէտք է դիմել ինստրուկտոր Մ. Սողոմոնեանցին: Կաթնարանը գտնվում է տէր Դևոնդ քահանայ Աթմասեանի տանը: Ուսման վճար չը կայ: Բնակարան տրվում է ձրի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Թաղական դպրոցները, ի հարկէ, զանազան վում են իրանց մեծութեամբ: Կայ այնպիսի դպրոց (Պէզնեան-Լուսաւորչեան), որ ունի 657 աշակերտ (393 տղայ, 264 աղջիկ): Դա ամենամեծ դպրոցն է: Այնուհետեւ գալիս են 4 դպրոցներ, որոնք 300 աշակերտից աւել ունեն, 6 դպրոց՝ 200 ից աւել աշակերտներով, 11 դպրոց՝ հարկերից աւել աշակերտներով: Դպրոցների ընդհանուր թիւ կէսից քիչ պակաս (18 հատ) ունեն աշակերտներ, սկսած 4 ից մինչև 100:

Ամենափոքրիկ դպրոցը Գանտիլի թաղի ս. Առաքելոց դպրոցն է, ուր ուսանում են 4 հոգի, այն էլ մի սրտառուչ հաւասարութեամբ սեռերի—2 տղայ և 2 աղջիկ:

Այժմ տեսնելու ինչ կազմակերպութիւն ունեն դպրոցները:

Արդէն «Թաղային վարժարան» անունը ցոյց է տալիս, որ դրանք համապատասխանում են մեր երեքմեան ծխական դպրոցներին և նպատակ ունեն դրադիտութիւնը: Բոլոր վարժարանները, բացառութեամբ 2-ի (որոնցից մէկը մեր յիշած ս. Առաքելոց դպրոցն է), ունեն ժանկապարէզ կամ ծաղկոց: Իսկ բուն դպրոցը բաղկացած է երկու բաժանմունքից—«տարրական նախակրթական» և «բարձրագոյն նախակրթարան»: Իւրաքանչիւր բաժանմունքը 2—2 տարվայ դասընթացը ունի: Բայց բարձրագոյն նախակրթարաններում համարեալ կան աշակերտներ:

Ինչով են պահպանվում թաղական դպրոցները: «Վիճակացոյցը» մատնանի է անում երեք աղբիւրներ. 1) եկեղեցական սնուցիչ—ստացվել է 49838 դրուշ, 2) աշակերտական թոշակ—30887 դրուշ, 3) նուէրներ և գանձանակներ—3188 դրուշ: Ընդամենը 83,913 դրուշ ամսական: Հաշուելով դրուշը 8 կօպէկ, կը ստանանք, որ 40 թաղական դպրոցների հասոյթը իւրաքանչիւր ամսում եղել է 6713 դրուշ: 4 կօպէկ, իսկ ամբողջ 1904 թւականին—80,556 դրուշ: 48 կօպէկ: Գէտը և խոտովանել, որ Կ. Պօլսի հայերը բաւական խոշոր կրթական տուրք են տալիս իրանց մայրենի լեզուով դաստիարակութիւնը պահպանելու համար:—Եւ այս գումարը միայն ուսուցչական ուժերին են կազմում:

Գանք այժմ ուսուցիչներին: Սրանց ընդհանուր թիւն է 300, սրանցից ուսուցիչ 186, վարժուհի 114: Օգտվելով այն հանգամանքից, որ ծախսերի մէջ նշանակված է միայն ուսուցիչներին ուժերը, մենք հետաքրքրվեցինք իմանալ թէ ինչպէս է վարձատրվում ուսուցչական դասն աշխատանքը Կ. Պօլսում: Ետեւ ամսական պատասխան ստացանք այս հարցի վերաբերմամբ: Այնտեղ, ուր ուսուցիչներ թիւը մեծ է, անկարելի է, ի հարկէ, հաշուել թէ ինչ են ստանում ուսուցիչները առանձին-առանձին: Բայց ահա կան դպրոցներ, ուր մի ուսուցիչ է դաս տալիս: Այդտեղ տեսնում ենք ուսուցիչներ, որոնք ստանում են 225, 300, 310 դրուշ (18 բ., 24 բ., 24 բ. 80 կ.): Այս դեռ, կարելի է ասել, «օրինաւոր» ուժիկ է: Ահա ս. Նիկողոսեան դպրոցի ուսուցիչը ստանում է—ինչ էք կարծում—80 դրուշ կամ 6 բ. 40 կօպէկ... Աւելի բախտաւոր է մեր վերոյիշեալ ս. Առաքելոց դպրոցի ուսուցիչը, որ իր 4 աշակերտների համար ստանում է ամբողջ 170 դրուշ, այսինքն 13 բ. 60 կօպէկ: Այս թւերը արդէն զարգ ցոյց են տալիս թէ ինչ դրութեան մէջ են գտնվում նախա-կրթարաններից շատերը: Ուսուցիչների վարձատրութիւնը մի լաւ նշան է թէ ինչ է ինքը ուսուցիչը, իսկ իմանալով ուսուցչի ինչ լինելը, կարելի է իմանալ թէ ինչ է և նրանց յանձնված դպրոցը:

Ինչպէս է, որ պօլսեցի հայերը չեն խղճում իրանց զաւակների դաստիարակներին...

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒԱԿՐԻՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆԻՑ

14 մայիսի

ԳՈՒՆԶԺՈՒԼԻՆ, 14 մայիսի: (Սեփ. թղթ.): Մայիսի 12-ին լուր տարածվեց, որ իբր թէ գնեւոր Միշինկոյի զօրամասը նոր արշաւանք արեց, որը աղող անցաւ: Այս անգամ արշաւանքի պատրաստութիւնը շատ գաղտնի էր կատարվում, այդ պատճառով մեր զօրամասի երևալը Մուկէնի մօտ բոլորովին անսպասելի էր: Դրա շնորհով՝ կարելի եղաւ ոչնչացնել հապոնական մի ամբողջ հետեւեղ գունդ, բռնել 200 ձի և 2 գնդաձիգ:

ՏՕԿԻՐ, 13 մայիսի: Պէսկադորեան կղզիների մօտ բռնված ֆրանսիական նաւի նաւապետը յայտնեց, որ ինքը մշտական երթեկներով են էր անում Հոնգկոնգի և Շանգհայի միջև:—Վերաւորված պօրա-արտուրքիների վերջին մասը ժամանեց Զիֆու:

ԳՈՒՆԶԺՈՒԼԻՆ, 13 մայիսի: Վերջին օրերս մեր զօրերը շփման մէջ էին թշնամու հետ, որին երեքմե յետ էին մղում, երեքմե էլ իւրանք էին նահանջում: Ամբողջ ճակատի վրա հապոնական պաշտպանութեան գէժը համարեալ չէ փոխվել:—Արեւմուտքում նկատված է որ խուճխուղները թողել են Գալիսոնի գետը և քաշվել Մօնգօլիս: Այս օրերս խուճխուղները յարձակվեցին մեր ֆուրբաւ տանողները վրա ծանձառեան կայարանից 25 վերստ հեռւ-սիւ-արեւմուտք: Ասում են, որ խուճխուղները առաջնորդները հազօծ են հապոնական զէսքաններ և որ նրանց մէջ շատ հապոնացիներ կան:—Ետպօսացիներին ասելով, շատ են խօսում իբր թէ տեղի ունեցած ծաղկային կռիւ

մասին, որի մէջ յաղթութիւնը ուսանելի կողմն է ցնացել:

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ. Գինեւրալ Լինեվիչի ամենա-հաջողակ հեռագիրը մայիսի 13-ին. «Բանակ-ներում փոփոխութիւններ չը կան: Մայիսի 11-ին հաղթանակները յարձակվելին մեր ձախ թիկ վրա էր դադարեց: Կամաւորները տարան սարքերին և մօտիկ տարածութեան կրակով 30 հոգի շարքից դուրս հանեցին թշնամու-կէս-հարկւրեակից: Նապօնացիները Վախէ-գօնից առաջ չանցան:

ՎԱՐՇԱՎԱ, 14 մայիս: Այսօր քաղաքում կացրած են գնեւրալ-նահանգապետի հետեւեալ յայտարարութիւնները. «Ի նկատի ունենալով վրդովեցուցիչ անկարգութիւնները, որ այս օրերս փողոցային ամբոխը կատարեց Վար-շավայում, յայտարարում եմ ամենքին, որ հասարակական կարգի և հանգստութեան վե-րականգնումը ես դեռ եմ զօրքի վրա, յանձ-նարարելով նրանց գէշը բանեցնել՝ առանց որ և է զիջողութեան: Բռնութիւններ, թալանի և սպանութեան մէջ մեղաւորները, նոյնպէս և զրդիները, օգնողները և թագնադները կը յանձնվին զինուորական դատարանի և կը դատ-վին պատերազմական ժամանակի օրէնքնե-րով»:

ՇԱՆԳՀԱՅ, 13 մայիս: Ենթադրում են, որ բալտիական էսկադրայի նաւերը խարխիս էին նետել կղզիների մօտ և անուխ վերցրել ու յորժանակել ուղին: Բուզլէյում նախագահը հե-ռագրել է չինական փոխարքային և համոզել, որ չէզոքութիւն պահպանէ:

ՊԱՐԻԶ, Սօֆիայից հաղորդում են, որ ուս-բօլքարական առևտրական դաշը կնքելուց յե-տոյ, շուտով կը կնքվի նաև կօստովական կօս-վէնցիա և դաշինք յանցաւորներին յանձնելու մասին: Իփէկում ալբանացիների գործողու-թեան եղանակը երկուդ է ազդում, որովհետև չը նայելով նրանց արված զիջումներին, նը-րանք հիմնել են ժամանակաւոր կառավարու-թիւն:

ՊԱՐԻԶ, 14 մայիս: Թիւրքիան որոշել է 100,000 հոգի զորաշարժի ենթարկել՝ արաբ-ների ապստամբութեան պատճառով: Դամաս-կոսում և Սիրիայի նաւահանգիստներում մահ-մահականներն սպառնում են բրիտանական-քին կոտորել: Տառնէնթալի ունեցել է տե-սակցութիւն Մարոկկոյի սուլթանի հետ: Վեր-ջինս պատրաստ է ընթրիքներ մտցնել Մադ-րիդի դաշնագիրը ստորագրող բոլոր պետու-թիւնների համաձայնութեամբ:

ՄԱԴՐԻԴ, Նաւատորմի վերակազմութեան ծրագրի մէջ ամրագրվել է 8 զրահակիր կառուցա-նելը՝ իւրաքանչիւրը 14000 տոննանոց, երկու-կըթական նաւեր, 5 զրահապատ կրէյսերներ, մի քանի հակաակաւանանաւեր ու փոխադրել-ների կառուցումը: Մոլային բերկշէտը 35 մի-լիօնից հասցրած է 65 միլիօնի:

ԿԱՆԵՍ, 13 մայիս: Պարլամենտն ընտրեց պատուիրակներ բանակցելու ապստամբների գլխաւորների հետ, որպէս զի համոզեն զեն-քերը յանձնել և պատրաստվել պետութիւն-ներէ խոստացած ընթրիքներին: Ապստամբ-ներն արտասահմանում 1000 ֆունտ ստէրլինգ պարծեք արին և ազգաբնակչութեան վրա հարկ են դնում կառավարութեան նման: Դրութիւնն աւելի է լրջանում:

15 մայիս

ՏՕԿԻՈ, մայիսի: (Լօնդօնի վրայով): Բօ-թէսովէնսկու էսկադրան ժամանեց Ցոլուսիմա Կղզու մօտ:

ԼՕՆԴՈՆ, 14 մայիս: Պաշտօնական տեղե-կութեան համաձայն, բալտիական էսկադրայի 50 նաւերը դիմել են Մազըլ կղզիներից դէպի հիւսիս: Այստեղ այդ հիման վրա կարծում են, որ ճակատամարտ տեղի կունենայ իրականի:

ՍՕՖԻԱ, Այն լուրը, որ իբր թէ Բօլզարիան Արգենտինայում գնել է մարտանաւեր Ռու-սաստանի հաշիւին՝ բողոքովին սուտ է:

ՎԱՐՇԱՎԱ, 14 մայիս: 3 օրվայ ընթաց-քում կատարած ամբոխը, գլխաւորապէս հրէա-նեւ, կողպուցեցին անառակ կանայք 123 բնա-կաւաններ ու ապաստաններ: Ոստիկանութիւ-նը ձերբակալել է մօտ 100 մարդ, որոնց մէջ կան և կողպուած իրերը հետները բռնված անձեր: Այսօր լիակատար կարգ է թագաւո-րում: Բանակապետից Վարշավա է բերված 12 բաւաւրիօն և 10 էսկադրօն զօրք:

ԿՈՊԷՆՀԱՅԵՆ, Շվեդական թագաժառանգի Անգլիա մեկնելը Դուստաւ-Ազօֆ պրինցի հարսանիքին՝ քաղաքական նպատակ կունենայ: Վերադարձին պրինցը երևի կը ամենի Պարիզ, իսկ Լօնդօնում, Պարիզում և Բեռլինում կը խորհրդակցէ առաջին մինիստրների հետ Շվեդիայի և Նորվեգիայի ընդհարման մասին:

ԽՐԻՍՏԻԱՆՈՒՄ: Մասնացոյց են տնում պրինց Վալդէմարին, դանիական արքայորդուն, իբր Նորվեգիական թագաւորի կամ նախագահի: Գինել են ահազին պաշարներ: Մի քանի հա-րիւր զինուոր, բանուորների զգեստներով ծաղ-ված, ամրացրին սահմանային բերդերը: Վեր-ջերս արտիլերիական պաշարների բեռներ ստացվեցին Անգլիայից: Մահմանի մօտ պա-հանները տակերն ականներ են դրված: Ակա-նանաւերը Խրիստիանիայի ծոցում ցերեկ-գե-շեր պահապանութիւն են անում:

ՇԱՆԳՀԱՅ, 15 մայիս: (Բեռլինի վրայով): Մասնաւոր տեղեկութիւններ հիման վրա Վալդիվօսաօկի էսկադրան նորից ծով է դուրս եկել:

ԲԵՐԼԻՆ, 14 մայիս: «Medic. Klinik» լրա-գիրը հաղորդում է, որ ուսու կառավարութիւնը մտադրել է առկիկայ սէմստրում գերմանա-ցի պրօֆէսորներ հրաւիրել ուսուց համալսա-րաններում դասախօսութիւններ կարդալու:

ԽՐԻՍՏԻԱՆՈՒՄ, 14 մայիս: (Բեռլինի վրա-յով): Պետական խորհրդի նիստում թագաւորն այսօր հրաժարվեց հաստատել հրկապատու-թիւնների մասին օրէնքը: Մինիստրութիւնը հրաժարական տուեց:

14 մայիս

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 14 մայիս: Սրբազան սի-նոդը պատարագեց և մողթանքից յետոյ Իսակիեմիկի առձարում, հեռագրով շնորհա-ւորութիւն մատուցեց Նոցա Մեծութիւններին, որի համար միտքաւորեա Անտօնի արժանա-ցաւ ստանալու նոյն օրն և եթ հետեւեալ հե-ռագրերը. «Ս. Պետրբուրգ. Միսթօպօլիս Անի-սիմ: Անկեղծ օմոհակալութիւն եմ յայտնում ձեզ, Տէր, Մօսկվայի եւ Կիեւի միսթօպօլիսնե-րին եւ Սրբազան Սինօդի մնացած անդամներին աղօթքներ համար: ՆիհիլՈՒՍ»:

Մայիսի 14-ին, Նոցա Մեծութիւններին սըր-բազան թագաւորութեան օրը, քաղաքը դար-դարվեց զրօշակներով և տօնական տեսք ըն-դունեց: Մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներում, զօրամասերում, պետական, բարեգործական հիմնարկութիւններում և ուրիշ տեղերում կա-տարվեցին ժամասացութիւններ: Մեծ Իշխան Կոստանտին Կոստանտինովիչ և Մեծ Իշխա-նուհի Նիկոլաեւա Մարիկիեւնա Օդեսայի մի-նիստներով ճանապարհ ընկան Մօսկվայի նահանգը:

ԿՕՎԱՍ, 14 մայիս: Անյայտ պատճառից յարվեց Տիւրմանի մետաղաթիւի գործարանը: ԼՕՆԴՈՆ, 14 մայիս: Գլխաւորաբար ժա-մանց Ալեքսանդր թագուհին:

ՊԱՐԻԶ, 15 մայիս: Սպանիական թագա-ւորը ճանապարհ ընկաւ Պարիզ: Թէպէտ և հեռագրական հաղորդակցութիւնը Շանգայի և Չոֆու-Պօի միջև ընդհատված է, սակայն ինքն ստորջրային հեռագրաթիւնը չէ կտրված: Քաղաքական շրջաններում դարմացած են, որ չինացիները դիմեցին Շանգայի ուսու-կան հիւպատոսութեանը, պահանջելով, որ ուսուկան նաւերը 24 ժամից յետոյ հեռանան, այն ինչ հաղթանակային նաւերը անհաղաք դա-լին են այնտեղ իրանց զրօշակ տակ: Երկար կանգ առնելով: Թիւրքիան դիպլոմատիական ներկայացուցիչ է ուղարկում Մարոկկո: Չա-նադան ազգերի 120 ներկայացուցիչներ, ո-րոնք կունենան դիպլոմատիական լիազօրու-թիւններ, կը ժամանակցին երկրազորական կոնֆէրենցիային Հոռոմում: Բուզլէյում շնոր-հակալութիւն յայտնեց Շանգայի փոխարքա-յին չէզոքութիւնը պահպանելու համար: Այն լուրերի պատճառով, թէ Բօլզարիան պատե-րազմի պատրաստութիւններ է տեսնում, Թիւրքիան, պահեստի զօրքերի զօրախաղերի պատրուակով, զենքի կանչեց երկրորդ և երրորդ կօրպուսները, որոնք գտնվում են Մալոնիկում և Ալբերանօպում:

ՏՕԿԻՈ, 14 մայիս: Ռուսական էսկադրայի մօտենալը կատարելապէս թուլացրեց առե-ւտրական նաւերի շարժումը դէպի Հեռաւոր Արևելք: Շատ շոգեհեռաւոր կարգի ֆեան անո-խով Նապօնիայի համար, նոյնպէս և բրիձնով և բամբակով հնդկական նաւահանգիստներից, կանգնեցրված են հէնց մտած առաջին նաւա-հանգստում: Դադարած է անուխի առևտուրը Նապօնիայի և Հոնգկոնգի միջև: Հեռագիր է ստացված Տօկիօյից, որից կարելի է իմանալ դէպի Ցոլուսիմա կղզին Բօթէսովէնսկու էս-կադրայի գալու լուրի ծագումը, որովհետև հեղինակաւոր անձինք հրաժարվում են հաւա-տալ, որ Բօթէսովէնսկին կարող էր գտնվել այն վտանգաւոր Կօրէական ջրանցքում, որի ամենանեղ մասում գտնվում է Ցոլուսիմա կղզ-դին: Բալտիական էսկադրայի նաւախումբը կանգնեցրեց և ընդութեան ենթարկեց Նիցոլու:

առևտրական առն վարձած նորվեգիական «Սէլօնդ» շոգեհաւու: Այդ նաւախումբը բաղ-կացած էր 21 նաւերից, որոնցից 14 նաւ վերածված են կրէյսերների և 6 հակաակաւա-նաւերի: Ռուս օֆիցերը նաւի կապիտանի. հետ խօսակցութեան մէջ ասեց, որ ուսուկան էսկադրան կանցնէ Ցօրմօզայից դէպի արևելք Ցոլուսիմա կղզու ուղղութեամբ: Կարծում են որ բալտիական էսկադրայի աւելի թոյլ կէսի երեւալը Շանգայի մօտ դիվէրսիօն է միայն, այն ինչ նրա գլխաւոր մասը արդէն անցել է դէպի Նաղդա ուղիւստուր և ծածկված է իր գտնվելու տեղը:

ՊԱՐԻԶ, 15 մայիս: Հաստատվում են այն տեղեկութիւնները, որ բալտիական էսկադրան մտել է Կօրէական ջրանցքը: Առ այժմ սակայն մտել են այնտեղ միայն խուզարկու նաւերը: Բօթէսովէնսկին մնացած էսկադրայի հետ միասին կարող է գալ միայն մայիսի 16-ին: Մոլդաւիա Ռօթէսովէնսկին գտնվում է Կօրէա-կան ջրանցքում Ցոլուսիմայի մօտ: Երեկ կտիւ-րայնեղ տեղի կունենայ: Մամուլի ներկայա-ցուցիչներին չեն թողնում այնտեղ: Ռուսական օժանդակ կրէյսերների Վուզուն գալը մեծ անհանգստութիւն առաջացրեց Նապօնիայում: Վախենում են ինկոու և Չէմուլպօ տարվող ուսուկան պաշարների և ռազմավթերների բռնվելուց:

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, Ինֆանտերիայի գնեւրալ Լինեվիչի ամենահաջողակ հեռագիրը 1905 թիւ մայիսի 14-ին. «Բանակներում փոփոխութիւն-ներ չը կան: Մայիսի 12-ին հաղթանակային հե-ծկազօրքը արշաւանք գործեց Սիմեօնիէի և Սինիուշէի միջև: Հիճեալ բաւարեա ուրա-կածում էր Սիմեօնիէին: Մեր զօրքերը հեռա-ցան Սիմեօնիէից: Առաջապահ զօրամասերը Սինիուշէի մօտ չլքեցին: Գերմանացիներ հա-կաւակարդին և ստիպեցին նրան նահանջել դէպի հարաւ: Ստացած լրացուցիչ տեղեկու-թիւնների համեմատ, գնեւրալ-աղիւստանա Միլլէնկօթ յարձակման ժամանակ բռնվեց հաղթանակային զրաւարկը 3760 հաղթանակային ինքով:

15 մայիս

ՀէՄԻՆԳՅՈՒՍ, 15 մայիս: Ժամանեց ֆինլանդական գնեւրալ-նահանգապետը: ՍԱՅԴՈՆ, 14 մայիս: Ստացված տեղեկու-թիւնների համեմատ Բօթէսովէնսկին, պոտյո-սանիով Ցօրմօզայի արևելքով, մայիսի 11-ին Շանգայի բարձունքի վրա էր, որտեղից շա-րունակեց ճանապարհը Կօրէական ջրանցքի ուղղութեամբ:

ՎԵՐՄԵՆԵՆԵՊՈՎՍԿ, 15 մայիս: Դուրսն որոշեց միջնորդել կառավարութեան առաջ, որպէս զի թոյլ տրվել 50,000 մարդուց պա-կաս ազգաբնակչութիւնն ունեցող քաղաքների ներկայացուցիչներին մասնակցելու քաղաքային կանոնադրութիւնը մշակող յանձնաժողովին:

ԼՕԴՁ, 15 մայիս: Վերելի գործարանը համաձայնեց աւելացնել 15/6: Հանգստացած բանուորները ցրվեցին:

ԵՒՄԻՆԵՅՈՒՆ, 15 մայիս: Բացվեց Նի-սաւեւաօլի նահանգի կալուածատէրերի հա-մաժողովը: Կազմված է պետիցիա Նորին Մեծութեան Փոխարքային՝ աղիւստակութեան կարիքների մասին:

ՏՕԿԻՈ, 15 մայիս: Հաղորդագրութիւն է ստացված, որ հաղթանակներ տեսել են բալ-տիական էսկադրան Ցոլուսիմա կղզու մօտ: Հետեւալ օրը այդ կողմում լսվում էր թնդա-նօթածութիւն:

ԳՈՒՆԶՈՒԼԻՆ, 15 մայիս: (Սեփ. թղթ.): Գինեւրալ Միլլէնկօթի կորուստները վերջին յարձակման ժամանակ. 3 սպանված և 9 վիրաւորված օֆիցերների, 34 սպանված և 120 վիրաւոր զինուորային:

ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 15 մայիս: Ցերեկվայ մէկ ժամին տպագրական գործի գործիչների ուս-սական ընկերութեան շինութեան մէջ կոմս Տօլստօյի նախագահութեամբ կայացաւ պար-բերական հրատարակութիւնների աշխատակից-ների դաշնակցութեան սահմանադրական ժո-ղովրդի ընդունեց դաշնակցութեան կա-նօնադրութեան նախագիծը:

ՊԱՐԻԶ, 15 մայիս: Ռուսական 16 նաւեր երեկ մնացին Վուզունում, չը նայելով չինա-ցիներին բողոքին: Իտալական ծովային մի-նիստութիւնը հեռագիր ստացաւ Զիֆուից, որ լուրերին նայելով, կտիւր Կօրէական ջրանցքում կորստաւոր հետևանքներ ունեցաւ երկու կողմերի համար ևս: Կորուստները սար-սափելի են, իբր թէ ոչ մի նաւ անփնա չէ դուրս եկել:

ՏՕԿԻՈ: Լուրեր են պտտում, որ ուսուկան 4 նաւեր անցան Գոլբիլիան ջրանցքը: Նրանց

անունները անյայտ են: Կարծում են, որ դրանք բալտիական էսկադրայի արագընթաց կրէյսերներ են: Ռուսները ջրասույզ արին ամբերկական նաւեր: Էլիզաբէթ փրկված է:

ՄՕՍԿՎԱ, 15 մայիս: Կանից հեռագիր է ստացվել Սավվա Մօրօզովի մահան մասին: Պերմի նահանգն ուղեւորող զինուորները, ո-րոնք գնում էին լրացնելու ժօրանեան գուն-դը, Սօկօնիկիում սպանութիւն գործեցին: Ոս-տիկանութիւնը զսպեց խառնակչիներին: Այսօր գործակաւարներն ընկել էին առևտուր անող մագազինները և պահանջում գործը դա-դարեցնել: Շատ մագազիններ գիջեցին: Նիկօ-լսկի փողոցում ոստիկանութիւնը ցրեց ամբոխը: ԼՕԴՁ, 15 մայիս: Քաղաքում շրջում են ուժեղ զօրապահակներ: Սկզբնականից եկաւ ստօրիան 38-դ գունդը: Քաղաքում գործա-դուլ արածների ընդհանուր թիւն է 30,000 հոգի:

ՊԵՐՄ, 14 մայիս: Մօտ 100 մարդ, գլխա-ւորապէս աշակերտներ, ուղեկցված ահազին ամբոխով, երկու անգամ փողոցային ցոյց ա-րին քաղաքական բնաւորութիւն կրող, առը-ճանակներ կրակեցին, քարեր նետեցին, ա-պակներ կոտորեցին: Երեք գնդակով վի-րաւորվեց գօրծօլօյը: Հրաւիրվեց մի վաշտ զօրք: Զէնքի չը դիմեցին:

ՀՌՕՄ, 15 մայիս: Կայացաւ երկրագործու-թեան միջազգային ինստիտուտի բացումը, որ հիմնել է Վիկտօր-Էմմանուէլ թագաւորը ամերիկացի Լիւբէնի խորհրդով:

ԽՐԻՍՏԻԱՆՈՒՄ, 15 մայիս: Թագաւորի մերժումը կոստուրների մասին օրինագիծի վերաբերութեամբ անպատեհի չէր: Հնդա-կառակը՝ կարենէտի հրաժարականի չընդու-նել ոչ որ չէր սպասում: Վերջինս սրում է կրկնել: Դրա վրա նայում են իբր գագա-ւորի պառակտումը Նորվեգիայի հետ:

16 մայիս

ՇԱՆԳՀԱՅ, 15 մայիս: Անթիլ հեռագրով ստացված տեղեկութեան համեմատ, ուսուկան վաղիվօստօկան կրէյսերները դուրս եկան նաւահանգստից՝ մասնակցելու համար ծովա-յին գործողութիւններում: Լուրերի համեմատ, «Ասկօլը», կրէյսերը գիշերը մտադրութիւն ունէր հեռանալ Շանգայից: Զինական կրէյ-սերները և բերդային իշխանութիւնները նա-խազգուշութեան առանձին միջոցներ ձեռք առան: Պաշտօնատար անձինք արդող գիշերը հսկում էին «Ասկօլին»: Նապօնական կառա-վարութիւնը ծանուցեց վաճառականներին, որ ներկայումս վաճառու է ապրանքներ ուղար-կել Նապօնի: Նապօնական 33 պատերազ-մական նաւեր նկատվել են Նանցզիէի գետա-բերանից դէպի հիւսիս: Այստեղ կարծում են, որ ուսուկան էսկադրան բաժանված է երեք նաւախմբի. առաջինը պէտք է գնայ դէպի Կօրէական, երկրորդը դէպի Ցոնգաբեան և երրորդը՝ դէպի լապիւրուգեան ջրանցքը:

ԶԻՆԻԼ, 15 մայիս: Այստեղի բրիտանական ծովային իշխանութիւնները հեռագիր ստա-ցան, որ մի զրահակիր ջրասույզ է արված, իսկ ուրիշ նաւեր փնտուածներ ստացան: Նապօ-նացիները հաւածում են նրանց Վաղիվօստօկի ուղղութեամբ: Նապօնացիները յարձակում գործեցին ուսուկանի վրա իր բոլոր նաւերով և բազմաթիւ ականանաւերով:

ՊԱՐԻԶ, 15 մայիս: «Տան» լրագրի թղթա-կիցը Զիֆուից հաստատում է իտալական մի-նիստութեան կողմից հեռագիր ծովային ճակատա-մարտի վերաբերմամբ ջրանցքում Ցոլուսի մօտ, բայց առանց յոռետես բնաւորութեան մանրամասնութիւնների: Շանգայից ստաց-ված հեռագիր համաձայն ուսուկան հինգ զրահակիրների, երեք կրէյսերների և եօթը հա-կաականանաւերի նկատված են երեկ բաց ծո-վում Ցոլուսի մօտ:

ՊԱՐԻԶ, 16 մայիս: (Սեփ. թղթ.) Բօթէսու-վէնսկին անցաւ Կօրէական ջրանցքը, զոհելով աւելի հին և պակաս արագընթաց նաւերը: Շնորհիւ դրան նա կը հասնի այժմ մինչև Վաղիվօստօկ:

ՏՕԿԻՈ, 15 մայիս: Երեկոյեան լուրեր էին պտտում ծովային ճակատամարտի մասին: Այստեղ ստացված հեռագիրների համաձայն, Բօթէսովէնսկին մօտեցաւ Ցոլուսիման ջրանց-քին արևմուտքից: Մայիսի 12-ին Իտալուցա կղզու մօտ նկատված է երեք խողովակեայ պատերազմական նաւ. յետոյ այնտեղ տեսան չորս պատերազմական նաւեր: Կարծում են, որ Բօթէսովէնսկին բաժանեց էսկադրան եր-կու նաւախմբի. հինգ զրահակիրների, երեք կրէյսերների և եօթ հակա-ականանաւեր մայի-սի 14 ին երեւցին Ցոլուսիման ջրանցքից դէպի արևելք: Նապօնական կառավարութիւնը չը

